



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՉԻՄՍԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՅ 40-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՄԲՈՒԹԻՒՆ

**ԵԿԵ՛Ք, ՄԻԱՍՆԱԲԱՐ ՊԱՅԾԱՌԱՑՆԵՆՔ
 ՄԵՐ ԼՈՒՍՈՅ ԽՈՐԱՆԸ**

ՊԱՏԳԱՄԵՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ

27ԷՆ 30 Հոկտեմբեր օրերը յիշատակելի ու տօնական օրեր եղան Սան Ֆրանսիսքոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ ծխական համայնքին համար: Արդարեւ, եկեղեցւոյ հիմնադրութեան 40րդ տարեդարձին առիթով, եկեղեցւոյ մեծ ընտանիքը վայելեց Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի այցելութիւնը եւ միասնաբար, եկեղեցական արարողութեամբ ու հանդիսաւոր ձեռնարկներով տօնակատարեց այս հանգրուանային առիթը:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅ

Առաջնորդ Սրբազան Հայրը Ուրբաթ, 27 Հոկտեմբերի երեկոյեան ժամանեց Սան Ֆրանսիսքօ եւ օդակայանին մէջ դիմաւորուեցաւ եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւին՝ Տ. Աւետիս Քինյ. Թորոսեանի, Հոգաբարձութեան Ատենապետին՝ Տիար Ներսէս Դշոյեանի եւ Ազգային Վարչութեան անդամ Տիար Կարպիս Պեգճեանի կողմէ: Նոյն երեկոյեան, ան հրաւիրուեցաւ ծխական համայնքի ամսական դրութեամբ կազմակերպուող ընտանեկան հաւաքին ու ընթրիքին: Սարոյեան սրահը զարդարուած էր տօնական պատկերներով եւ զարդերով. ժամը 8-ին Սրբազան Հայրը մուտք գործեց սրահ՝ ներկայ աւելի քան 300 հանդիսականներու ծափողջոյններով, եւ բարի վայելումի մաղթանք ուղղեց բոլորին: Երեկոն խանդավառեց սիրուած երգիչ եւ երաժիշտ Յարութիւն, ներկաները ճաշակեցին ընտանեկան երեկոյի յանձնախումբի տիկիներուն պատրաստած համեղ ճաշերը: Խրախճանքի աւարտին, հիւրընկալ տիկիները միասնաբար մուտք գործեցին սրահ՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ 40-ամեակի յատուկ կարկանդակով: Առաջնորդ Սրբազան հայրը, Հովիւն ու Ատենապետը միասնաբար կտրեցին կարկանդակը:

Խօսք առաւ Առաջնորդ Սրբազան Հայրը, որ շնորհաւորեց ծխական համայնքը. ան շեշտեց, որ այս համայնքը իր կազմութեան օրերէն սկսեալ եղած է տիպար եւ պարտաճանաչ գաղութ: «Համայնքը մեծ եւ բազմանդամ ընտանիք մըն է, որուն անդամները սիրով ու յարգանքով վարուելու են իրարու հետ եւ գործակցելու են ամեն մակարդակի վրայ» յորդորեց Սրբազան Հայրը, վեր առնելով

այն իրողութիւնը թէ անցեալ տասնամեակներուն, սիրոյ եւ գործակցութեան այդ ոգին՝ դրական եւ շօշափելի արդիւնք տուած է ընկերային եւ շինարարական գետնի վրայ:

Առաջնորդ Սրբազան Զօր օրհնութեան աղօթքով վերջ գտաւ ընկերային հաւաքը:

40-ԱՄԵԱԿԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Շաբաթ, 28 Զոկտեմբերի երեկոյեան ժամը 7-ին, Առաջնորդ Սրբազան Զայրը հրաւիրուեցաւ «Սարոյեան» սրահ, հովանաւորելու եւ նախագահելու համար եկեղեցւոյ 40-ամեակի գլխաւոր ձեռնարկին, որ կազմակերպուած էր եկեղեցւոյ Տիկնաց Միութեան կողմէ: Յատուկ հրաւերով իրենց մասնակցութիւնը բերին գաղութիս բոլոր միութիւններու ներկայացուցիչները. ներկայ էին նաեւ Ազգային Վարչութեան անդամ Տիար Կարպիս Պեգճեան, եկեղեցւոյ Ազգ. Երեսփոխանները, Զոգաբարձութեան անդամներ եւ պաշտօնէութիւնը:

Ձեռնարկին Զանդիսաձարն էր եկեղեցւոյ Տիկնաց Միութեան Ատենապետուհին՝ Տիկ. Արաքս Սարեան, որ առաջին հերթին հրաւիրեց Առաջնորդ Սրբազան Զայրը կատարելու սեղանի օրհնութիւնը: Զանդիսաձարի բարի գալստեան խօսքէն ետք, ընթացք առաւ գեղարուեստական կոկիկ յայտագիր մը. հայրենասիրական երգերով յաջող ելոյթներ ունեցան Տէր եւ Տիկին Գեորգ եւ Զելլէն Պուրսալեաններ, ապա իր մօր կողմէ դաշնակի վրայ ընկերակցութեամբ, Զելլին Չինտարսեան մեկնաբանեց ժողովրդային երգեր:

Զանդիսաձարը յաջորդաբար հրաւիրեց հոգաբարձութեան Ատենապետը, Ազգային Վարչութեան ներկայացուցիչը, Զոգեւոր Զովիւրը, Պատուելի Ծէյմս Գիգիբեանը, Տիար Նուպար Տեմիրճեանը եւ ուրիշներ, որոնք արտասանեցին սրտի ու գոհունակութեան խօսքեր: Անոնք սրտաբուխ արտայայտութիւններով եւ գեղեցիկ յուշերով ոգեկոչեցին յիշատակներ եւ եկեղեցւոյ հիմնադրութեան հետ առընչուած դրուագներ: Տէր Զայրը կարեւորութեամբ շեշտեց եկեղեցին գործնապէս սիրելու եւ պաշտամունքային կեանքին մասնակցելու կարեւորութիւնը, որուն շնորհիւ եկեղեցին կը պայծառանայ:

Արձանագրուեցան յուզիչ յիշատակներ: Յայտարարուեցաւ, որ Տէր եւ Տիկին Կարպիս եւ Մայտա Պեգճեան ամուրը եկեղեցւոյ մէջ առաջին պսակուողներն են եղած 1966ին, առաջին մկրտուած մանուկին անունն էր Քէրըն Չինտարսեան:

Տիկնաց Միութեան կողմէ սրահ բերուեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ 40-ամեակի կարկանդակը: Ներկաները խանդավառութեամբ ՇՆՈՐՀԱԻՈՐ ՏԱՐԵԴԱՐՁ երգեցին, իսկ Առաջնորդ Սրբազանը, Զոգեւոր Զովիւրը, Ատենապետն ու Զանդիսաձարը միասնաբար կտրեցին 40-ամեակի կարկանդակը:

Զուսկ խօսք առաւ Առաջնորդ Սրբազան հայրը, որ անգամ մը եւս շնորհաւորեց եկեղեցւոյ ընտանիքը եւ մատնանշեց այն իրողութիւնը թէ այսօր, «այս օրհնեալ հանգրուանին, աշխարհական թէ հոգեւորական պատասխանատուներս նորոգելու ենք մեր կամաւոր եւ գիտակից յանձնառութիւնը Զայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ եւ անոր շուրջ համախմբուած մեր ժողովուրդին նկատմամբ: Զառասուճամեակը առիթ ըլլալու է ինքնաքննութեան եւ հոգեկան նորոգութեան: Ամեակները կ'արժեւորուին գիտակից նուիրումով եւ նորը ու աւելին կատարելու վճռակամութեամբ»: Սրտապնդիչ այս խօսքերն ու գաղափարները մղիչ ոյժ հաղիսացան բոլոր ունկնդիրներուն, որպէսզի հոգեպէս

գօտեպնդուած՝ ամբօրէն կառչինք մեր հաւատքի եւ գոյութեան միջնաբերդ Յայ Եկեղեցւոյ:

Պահպանիչ օրինութեան աղօթքով եւ «Կիլիկիա» խմբերգով աւարտեցաւ 40-ամեակի գլխաւոր ձեռնարկը:

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ

Կիրակի, 29 Յոկտեմբերի առաւօտեան, Առաջնորդ Սրբազանը Ս. Պատարագ մատուցեց Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ: Եկեղեցւոյ ծխականները ծովածոցի հեռաւոր շրջաներէն եկած էին եկեղեցի, մասնակցելու Ս. Պատարագին եւ շնորհակալութիւն յայտնելու Մեծ Բարերարին՝ Աստուծոյ, մեզի շնորհած եկեղեցւոյ՝ մեր հաւաքական աղօթքի տան հիմնադրութեան համար: Բարեպաշտ ժողովուրդին կողքին իրենց յատուկ տեղը կը գրաւէին Յ.Մ.Ը.Մ.ի Ուոլնսթ Բրիքի եւ Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղերու սկառուտները:

Յընթացս Ս. Պատարագի, Առաջնորդ Սրբազան հայրը իր հոգեւոր պատգամի սկիզբը ողջունեց եւ շնորհաւորեց համայնքի բոլոր միութիւնները, երեսփոխանները, եկեղեցւոյ պաշտօնէութիւնը եւ Ազգ. Վարժարանի Ուսումնական ու Տնտեսական մարմինները, ուսուցչական եւ տեսչական կազմը, եւ բոլորին ազգանուէր գործերուն յաջողութիւն մաղթեց: Առաջնորդ Սրբազանը այս առիթով սրտագին կոչ ուղղեց ներկայ հաւատացեալներուն ըսելով. «Եկեք, միասնաբար լուսաւոր պահենք լոյսով վառուած Ս. Գրիգոր Լուսաւորիչ Յայրապետին խորանը»: Ապա, ան անդրադարձաւ Գիւտ Խաչի պատմական դէպքին, որուն տօնն էր այդ օրը: Ան յիշեցուց, որ ինչպէս Յեղիսէ Թագուհին փնտռեց, գտաւ եւ բարձրացուց Զրիստոսի խաչափայտը, նոյնպէս ալ Սան Ֆրանսիսքոյի հայ համայնքը կանուխէն՝ աւելի քան 40 տարիներ առաջ փնտռեց, գտաւ եւ արժեւորեց Զրիստոսի Ս. Խաչը, Խաչելութեան խորհուրդը եւ առաջին հերթին կանգնեց հայ ճարտարապետութեան ոճին եւ ոգիին հարազատ՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին: Ան գոհունակութիւն արտայայտեց, որ 40 տարիներու արդիւնաշատ աշխատանք ունեցած է եկեղեցին՝ համայնքային կեանքին մէջ: Ան թելադրեց սիրել եւ կապուիլ եկեղեցւոյ, հաւատքով եւ հաւատարմութեամբ, հիմնադիր սերունդի ջերմ օրինակով եւ հետեւողութեամբ:

Ս. Պատարագի աւարտին Յոգեհանգստեան Պաշտօնի աղօթքով յարգանքով յիշուեցան եկեղեցւոյ հիմնադիր բարերարները, ծառայողները, եւ գործած ու անցած վախճանած հոգեւորականները: Սրբազան Յայրը մաղթեց, որ մեր ծխական համայնքը հաստատամտութեան ուխտով շարունակէ ծառայել Ս. Եկեղեցւոյ հովանիին ներքեւ եւ վառ ջախը փոխանցել նոր սերունդին:

«Կիլիկիա» երգի միասնական երգեցողութեամբ աւարտեցաւ Ս. Պատարագը:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ԱԶԳ. Գ. 2. Վ. ՎԱՐՇԱՐԱՆ

Առաջնորդ Սրբազանը Երկուշաբթի, 30 Յոկտեմբերի առաւօտուն ընդառաջեց Ազգային Գ. 2. Վ. Վարժարանի տեսչութեան հրաւերին, ու անձամբ հովանաւորեց Մշակութային Ամսուան առիթով աշակերտութեան պատրաստած եւ Յայ Մշակոյթին ու Լեզուին նուիրուած գեղարուեստական յայտագիրը:

Սրբազան Յայրը ժամը 11-ին ժամանեց վարժարան եւ դիմաւորուեցաւ ուսուցչական կազմին եւ Ուսումնական ու Տնտեսական խորհուրդի անդամներուն

կողմէ. ան առաջնորդուեցաւ «Սարոյեան» սրահ, ուր աշակերտները ծափողջոյներով դիմաւորեցին զինք ու ընկերացող շքախումբը:

Գեղարուեստական յայտագիրը սկիզբ առաւ Վարժարանիս ութերորդ կարգի աշակերտուհիներէն Սալբի Սիահեանի Զայ Լեզուին Ձօնուած խօսքերով: Ապա նախամանկապարտեզէն սկսեալ աշակերտները հանդէս եկան հայերէն երգերով, պարերով եւ Զայ Լեզուին նուիրուած արտասանութիւններով: Վարժարանի աշակերտական «Ճպում» երգչախումբը, Տիկին Սեւան Պալապանեանի ղեկավարութեամբ, չորս երգերով յաջող ելոյթ ունեցաւ, ջերմացնելով ներկաներուն հոգիները:

Յայտագրի եզրափակիչ խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազան Զայրը, որ մատչելի լեզուով եւ աշակերտներուն հետ երկխօսութեան մտնելով, անոնց մատղաշ սրտերուն մէջ դրոշմեց հայ լեզուի եւ գիրի սերը: Աշակերտները, մեծ թէ պզտիկ, խոստացան շատ սիրել եւ լաւ սորվիլ հայերէնը:

Յայտագիրը վերջ գտաւ Առաջնորդ Սրբազանին օրհնութեան աղօթքով:

Սրահէն, Առաջնորդ Սրբազանը մանկապարտեզի աշակերտներով շրջապատուած ուղղուեցաւ մանուկներու նորակառոյց խաղավայրը, եւ աղօթքով ու խաչով օրհնեց նոր խաղավայրը: Կեսօրին, Առաջնորդ Սրբազանը ճաշեց վարժարանի ուսուցչական կազմին եւ պատկան մարմիններու հետ, որոնք աւելի ուշ բարի երթ մաղթեցին Առաջնորդ Սրբազանին:

Առաջնորդ Սրբազան Զօր եռօրեայ այցելութիւնը օգտաշատ եւ բարենպաստ եղաւ Սան Ֆրանսիսքոյի գաղութին համար, որ միշտ ալ գործնապէս յարգած եւ գնահատած է հայ ժողովուրդի ծառայութեան մէջ եղող իր հոգեւոր առաջնորդները:

ԱԻԵՏԻՍ ԸՅՆՅ. ԹՈՐՈՍԵԱՆ

DURING THE 40TH ANNIVERSARY CELEBRATIONS OF ST. GREGORY CHURCH

COME, TOGETHER LET US BRIGHTEN THE ALTAR OF LIGHT

DECLARED THE PRELATE

On Friday, October 27, 2006, H. E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, departed for San Francisco to join the parish community in celebrating the 40th anniversary of St. Gregory Church. The Prelate landed in San Francisco on Friday evening, upon which he was greeted by Rev. Avedis Torossian, Board of Trustees Chair Mr. Nerses Teshoian, and Prelacy Executive Council member Mr. Garbis Bezjian. Later that evening, the celebrations began with a family night at Saroyan Hall. In his remarks, the Prelate congratulated the parish community and commended their hard work. The evening came to a close with the Prelate's benediction.

On the evening of Saturday, October 28, the parish Ladies Auxiliary had organized a banquet as the main event of the 40th anniversary celebrations, under the auspices of and presided over by the Prelate. By special invitation, representatives from all local Armenian organizations participated in the event. The emcee of the

evening was Ladies Auxiliary Chair Mrs. Arax Sarian, who invited the Prelate to bless the tables. Following the emcee's welcoming remarks, the artistic program began. The emcee then invited the Board Chair, Executive Council representative, Rev. Avedis Torossian, Rev. James Kizirian, Mr. Noubar Demirjian, and others to convey their messages, followed by the cutting of the 40th anniversary cake by the Prelate, Pastor, and Board Chairman. In his concluding remarks, the Prelate once again congratulated the parish community, stressing that on this blessed occasion "we must reexamine ourselves and renew our responsibilities and commitment to the church and community". The event concluded with the "Bahbanich" prayer and the collective singing of "Giligia".

On Sunday, October 29, Archbishop Mardirossian conducted Holy Mass at St. Gregory Church, where joining the parishioners in celebrating Mass were Homenetmen scouts from the Walnut Creek and San Francisco chapters. During his sermon, the Prelate urged the parishioners to come together to keep the light of the church shining bright. He then spoke on the feast of the Discovery of the Holy Cross, which was also celebrated on that day, reminding the faithful that just as Queen Heghine sought and found the Holy Cross, so did this parish community when it was inspired forty years ago to build St. Gregory Church. The Prelate then urged the faithful to serve the church with faith in the example of the founders. During requiem service, special prayers were offered for the souls of the founding members, clergymen, benefactors, and volunteers. Services concluded with the collective singing of "Giligia".

On the morning of Monday, October 30, the Prelate visited Krouzian-Zekarian-Vasbouragan School where the students had organized a performance to honor the Armenian culture and language on the occasion of Armenian Culture month. In his closing remarks, the Prelate had a dialogue with the students, during which he instilled in them a love of the Armenian language. He concluded with the benediction. The Prelate was then escorted to the newly built playground, which he blessed. Subsequently, the Prelate enjoyed lunch with the school administration, after which they bid him farewell and a safe return to Los Angeles.